



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745
E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ ՀԱՅՐ ՕԳՈՍՏԻՆՈՍ ՍԵՔՈՒՆԵԱՆԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ

Հինգշաբթի, 16 Հոկտեմբերի յետմիջօրէին, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան ընդունեց Միխթարեան Հայրերու Վարժարանի ընդհանուր պատասխանատու Հոգ. Տ. Օգոստինոս Վրդ. Սեբուլեանի այցելութիւնը: Հայր Սուրբը Ազգ. Առաջնորդարան եկած էր, փոխադարձելով Առաջնորդ Սրբազանին այցելութիւնը:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց հիւր հոգեւորականը եւ ընդհանուր գիծերու մէջ տեղեկութիւններ փոխանցեց Ազգային Առաջնորդարանի հովանիին տակ տարուող աշխատանքներուն մասին:

Հայր Օգոստինոս իր կարգին անդրադարձաւ հայեցի դաստիարակութեան առնչուող հարցերու մասին եւ բարեմաղթութիւններ փոխանցեց Թեմի յաւելեալ ծաղկումին համար:

Հրաժեշտի պահուն, Առաջնորդ Սրբազանը հիւր հոգեւորականին նուիրեց Ազգ. Առաջնորդարանի հրատարակութիւններէն՝ ժազ Ս. Յակոբեանի «Մեսրոպապէպ» հատորէն օրինակ մը:

PRELATE WELCOMES FATHER AUGUSTINE SZEKULA

On the afternoon of Thursday, October 16th, Principal of Mekhitarist Fathers' Armenian School Father Augustine Szekula visited the Prelacy to congratulate H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, on his re-election and to discuss issues of mutual concern.

The Prelate communicated to Fr. Augustine the work that is carried out by the Prelacy and the various committees serving under its jurisdiction. A discussion on issues relating to Armenian education and instruction in general followed.

The meeting concluded with Fr. Augustine conveying his wishes of success for future endeavors and the Prelate presenting him with a copy of Jacques Hagopian's latest book "Mesrobaveb".